



Բասիլայել Պատկանյան

Ուռը

Իրիկուան մէջ, գիտինք քով,
Կը մըրմընջէ գուն ուռիին տակ շըքեղ:
Չայն կը լեցնէ աղբիւրն երգովը բիւրեղ,
Աստղը՝ բիւրեղ արցունքով:
Խորհուրդին մէջ ըստուերին
Կընունքի ջինջ աւագան մ'է կարծես ան՝
Ուր քաղցրօրէն կը մըկըրտուի լուսընկան՝
Տըղու մը պէս նորածին:
Յոգնաբէկ խումբն եզներուն
Հոն կը դիմէ արահետէն ճախճախուտ՝
Ուրկէ կ'հոսի, ճապաղելով, ջուրն անփոյթ՝
Մարգերուն տակ՝ պըսպըղուն:
Կողեր կողի դէմ ահա՛,
Եվ գաւակներ գաւակներու կ'ընդհարին.
Յանկարծ մոլուցք մ'եղջիւրներու ահագին
Կը տատանի գունին վրայ:
Միահաղոյն կ'երկարեն
Վիզերն իրենց, և ռունգերնին յարդամած
Յըստակ ջուրին աղամանդին մէջ մըխած՝
Յաւերժօրէ՛ն կը խըմեն:
Կ'ընպեն ալիքն անապակ,
Լոյս ծիրուոր պարեխներուն սառնակերտ.
Ու չէ՛ն խըրտչիր լուսընկայէն՝ որ մերթ մերթ

Կ'լողայ իրենց բերնին տակ:
Կը վերցրնեն երբեմն, յա՛գ,
Հրգօր գլուխնին, ու կը նային սարերո՛ւն...
Կը սորսորայ իրենց դունչէն՝ քարերուն՝
Չուրը, երակ առ երակ:
Անդէորդն, հոն, մահակին
վրայ կըռթնած՝ կը սուլէ երգն հեշտօրօր,
Մինչն վէտ վէտ ցամքի հեղուկը բոլոր,
Մընայ մամունն՝ յատակին:
Կ'երթան յետոյ, օրօրուն,
ունին խաղաղ գաւիթին մէջ պատկելու.
Կը կարկաշէ գիղամէջէն, գերթ առու,
Չանգակն իրենց վիզերուն:
Ու երբ դարձեալ գան առտուն
Պիտի գրտնեն հրսկումին տակ ուռիին
ուռը նորէ՛ն լեցուած երգովն աղբիւրին,
Եվ արցունքովն՝ աստղերուն:
Իրիկուան մէջ, գիղին քով,
Կը մըրմընջէ գուն ուռիին տակ շրքեղ:
Չայն կը լեցնէ աղբիւրն երգովը բիւրեղ,
Աստղը՝ բիւրեղ արցունքով:
Խորհուրդին մէջ ըստուերին
Կընունքի ջինջ աւագան մ'է կարծես ան՝
Ուր քաղցրօրէն կը մըկըրտուի լուսընկան՝
Տըղու մը պէս նորածին:
Յոգնաբեկ խումբն եզներուն
Հոն կը դիմէ արահետէն ճախճախուտ՝
Ուրկէ կ'հոսի, ճապաղելով, ջուրն անփոյթ՝
Մարգերուն տակ՝ պըսպըղուն:
Կողեր կողի դէմ ահա՛,
Եվ գաւակներ գաւակներու կ'ընդհարին.
Յանկարծ մոլուցք մ'եղջիւրներու ահագին
Կը տատանի գոռին վրայ:

Միահաղոյն կ'երկարեն
Վիզերն իրենց, և ռունգերնին յարդամած
Յրստակ ջուրին աղամանդին մէջ մըխած՝
Յաւերժօրէ՛ն կը խըմեն:
Կըմպեն այլքն անապակ,
Լոյս ծիրունը պարեխներուն սառնակերտ.
Ու չե՛ն խըրտչիր լուսընկայէն՝ որ մերթ մերթ
Կ'լողայ իրենց բերնին տակ:
Կը վերցընեն երբեմն, յա՛գ,
Հրգօր գլուխնին, ու կը նային սարերո՛ւն...
Կը սորսորայ իրենց դունչէն՝ քարերուն՝
Ջուրը, երակ առ երակ:
Անդէորդն, հոն, մահակին
վըրայ կըռօնած՝ կը սուլէ երգն հեշտօրօր,
Մինչև վէտ վէտ ցամքի հեղուկը բոլոր,
Մընայ մամունն՝ յատակին:
Կ'երթան յետոյ, օրօրուն,
ոմին խաղաղ գաւիթին մէջ պատկելու.
Կը կարկաշէ գիղամէջէն, գերթ առու,
Չանգակն իրենց վիզերուն:
Ու երբ դարձեալ գան առտուն
Պիտի գըտնեն հըսկումին տակ ուռիին
ուռը նորէ՛ն լեցուած երգովն աղբիւրին,
Եվ արցունքովն՝ աստղերուն: